



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱԿՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Երեքշաբթի, 15 Յուլիս յետմիջօրէին, Ազգային Առաջնորդարան այցելեցին Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան ներկայացուցիչները՝ Տեառք Վահիկ Ծատուրեան եւ Յովիկ Երեմեան, եւ ընդունուեցան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Ներկայ էին նաեւ Հոգ. Տ. Պարթեւ Կիւլիմեան եւ Ազգ. Վարչութեան Ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան:

Հիւր ներկայացուցիչները ընդհանուր տեղեկութիւններ տուին Հաստատութեան սերնդակերտ աշխատանքին մասին, որուն գլխաւոր դաշտն է հանրային վարժարաններու հայ աշակերտներուն հայեցի դաստիարակութիւն տալը: Անոնք նաեւ գոհունակութեամբ խօսեցան անցեալ ամիս հաստատութեան կազմակերպած թելեթոնին մասին, որ ապահոված է մեր ժողովուրդին լիաբուն մասնակցութիւնը: Այս առիթով, անոնք նաեւ շնորհակալութիւն յայտնեցին որ Ազգ. Վարչութեան անդամներ եւ մեր եկեղեցիները մասնակցութիւն բերած էին հանգանակային այս արշաւին:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Դաւթեան-Մարիամեան Կրթ. Հաստատութեան գործունեութիւնն ու նուիրեալ կամաւորներուն ծառայութիւնները, ընդձեռնով, որ մեր ժողովուրդը միշտ զօրավիգ կը կանգնի ազգօգուտ ծրագիրներու մասնաւանդ երբ անոնք կը նպաստեն նոր սերունդին:

## **PRELATE MEETS WITH REPRESENTATIVES OF DAVIDIAN & MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION**

On the afternoon of Tuesday, July 15<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives of Davidian and Mariamian Educational Foundation Mr. Vahik Satoorian, Chairman, and Mr. Andranik Yeremian, Secretary. Very Rev. Fr. Barthev Gulumian and Executive Council Chairman Dr. Garo Agopian were also present.

The representatives reported to the Prelate on the nature of their activities, which focuses on providing Armenian language and culture instruction to students attending public schools. They also discussed the first telethon of the foundation, which took place last month, and thanked the Prelate for the participation of the parishes and Executive Council.

The Prelate highly commended the endeavors and mission of Davidian and Mariamian Educational Foundation and the devotion of its members, wishing them success in their service to a new generation of youth.